



## ՎԱՐԿԻ ՄԵՐԺՈՒՄ

1. Վարկառուի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և նրա վարկունակության գնահատման փուլում Դիմում-հայտը կարող է մերժվել, եթե՝
  - ✓ ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն.
  - ✓ ներկայացված փաստաթղթերը կամ փաստաթղթերում ներկայացված տվյալները չեն համապատասխանում իրականությանը.
  - ✓ առկա է Հաճախորդի և նրա հետ փոխկապակցված անձանց (նաև Երաշխավորի(ների)) բացասական վարկային պատմություն
  - ✓ հաճախորդի նախորդ 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի հանրագումարը գերազանցում է 45 օրը.
  - ✓ Հաճախորդի վարկունակությունը բավարար չէ ակնկալվող վարկային պարտավորությունների մարման համար (այդ դեպքում՝ Դիմում-հայտը պարտադիր մերժվում է).
  - ✓ չի հիմնավորվում բիզնես վարկի ստացման անհրաժեշտությունը.
  - ✓ գրավադրվող գույքը և/կամ նրա արժեքը ընդունելի չէ Ընկերության համար,
  - ✓ Տնօրենի, Բիզնեսի վարկավորման բաժնի ղեկավարի, մասնաճյուղի ղեկավարի կամ վարկային մասնագետի հիմնավոր կարծիքով վարկի տրամադրումն Ընկերության համար պարունակում է ռիսկեր կամ նրանց հիմնավոր կարծիքով կան հայտի մերժման այլ հիմքեր.
  - ✓ առկա են կամ վարկի տրամադրումից հետո կարող են առաջանալ այնպիսի ռիսկեր, որոնք հետագայում կարող են մեծապես նվազեցնել հաճախորդի վարկունակության մակարդակը.
  - ✓ երբ հաճախորդը կամ նրա հետ փոխկապակցված անձինք նախորդ երեք ամիսների ընթացքում դիմել են Ընկերությանը տվյալ Կարգի շրջանակներում վարկ ստանալու խնդրանքով և ստացել են մերժում.
  - ✓ եթե հաճախորդի և/կամ իրավաբանական անձ կամ Անհատ Ձեռնարկատեր հանդիսացող Երաշխավոր(ներ)ի կողմից պետական մարմիններ ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում առկա է բացասական ֆինանսական արդյունքներ:
2. Ինչպես նաև վարկային կոմիտեի որոշմամբ: